# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 45 - 46 (16241) ՇԱԲԱԹ, 7 ՀՈՒՆԻՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


ՎՐԱՍՏԱՆ-ԳԵՐՄԱՆԻԱ

## ԱՆԳԵԼԱ ՄԵՐԿԵԼ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԼԱՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ Է»

*Հունիսի 2-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Գերմանիայում: Նա Բեռլին էր ժամանել Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի անձնական հրավերով:*



Վրաստանի վարչապետի գլխավորած պատվիրակության կազմում էին Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Մանանա Կոբախիձեն, արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրացման հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին, ենթակառուցվածքի ու զարգացման նախարար Էլգուջա Խոկրիշվիլին, գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիան եւ կառավարության վարչակազմի փոխղեկավար Նինո Կոբախիձեն:

Պաշտոնական հանդիպման արարողությունից հետո, Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵԱՀԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

*Հունիսի 2-ին, Հարավային Կովկասում շրջագայության շրջանակներում, աշխատանքային այցով Թբիլիսիում էր գտնվում Շվեյցարիայի նախագահ, ԵԱՀԿ գործող նախագահ Դիդիե Բուրկհալտերը:*



Այցի շրջանակներում՝ Դիդիե Բուրկհալտերը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեի հետ: Այցի ընթացքում նա եղավ Ցխինվալի տարածաշրջանի հետ վարչական սահմանի Էրգնեթի վրացական գյուղում եւ մասնակցեց Միջադեպերի կանխման եւ հակազդման մեխանիզմի շրջանակներում կայացած հանդիպմանը:

Վրաստանի նախագահի հետ հանդիպմանն առանձնակի ընդգծվեց

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՈՒՄ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԸՆՏՐԵԼՈՒ

*2014 թվականի հունիսի 15-ին Վրաստանում կանցկացվեն տեղական ինքնակառավարման ընտրություններ:*

Ի տարբերություն նախորդ նույն մակարդակի ընտրությունների, ընթացիկ ընտրություններին անմիջական կարգով ընտրվելու են ինքնակառավարման 12 քաղաքների քաղաքապետերը եւ 59 մունիցիպալիտետների վարչության նախագահները: Բացի այդ, երկրի մասշտաբով ընտրվելու են 71 մունիցիպալային սակրեբուլոների 2088 անդամներ:

Հիշեցնենք, որ տեղական ինքնակառավարման մասին օրգանական օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, մինչ այդ ինքնակառավարման կարգավիճակ ունեցող հինգ քաղաքների թիվն ավելացվել եւ հասցվել է 12-ի: Ինքնակառավարման քաղաքի կարգավիճակ ունեն Թբիլիսին, Ռուսթավին, Քութայիսին, Փոթին, Բաթումին, Թելավին, Օզուրգեթին, Զուգդիդին, Գորին, Ամբրոլաուրին, Մցխեթան եւ Ախալցիխեն: Վերոնշյալ քաղաքներում քաղաքապետի, ինչպես նաեւ մունիցիպալային վարչության նախագահի պաշտոնին կարող են հավակնել 25 եւ ավելի տարեկան Վրաստանի այն քաղաքացիները, ովքեր վերջին հինգ տարիների ընթացքում ապրել են Վրաստանում եւ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ Է»

*Հունիսի 4-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին վերստին ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար անցկացրեց հերթական մամլո ասուլիսը:*

Իր ներածական խոսքում վարչապետն ընդգծեց, որ ինքնակառավարման տեղական մարմինների առաջիկա ընտրությունների արդյունքներով, ամբողջ երկրում չպետք է մնա «Միասնական ազգային շարժում» նախկին կառավարող կուսակցության ոչ մի ներկայացուցիչ:

Նշենք, որ առաջին անգամ նման հայտարարություն Վրաստանի վարչապետն արել էր մայիսի 31-ին, Գուրիայի տարածաշրջանի բնակչության հետ կայացած հանդիպմանը, ինչը հարուցել էր քաղաքական ընդդիմախոսների եւ ոչ կառավարական հատվածի խիստ քննադատությունը:

«Անշուշտ, դա ոչ միայն մեր, այլեւ բնակչության ցանկությունն է: Պարզապես այստեղ մեր ցան-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

## ՀԱՍՏԱՏՎԵՑ «ՎՐԱՍՏԱՆ-2020» ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*Հունիսի 6-ին Վրաստանի կառավարությունը հաստատեց «Վրաստան-2020» սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը:*



Ինչպես հայտարարեց ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, ռազմավարության մշակումը սկսվել էր անցյալ տարվա հոկտեմբերին, եւ դրան մասնակցել են տարբեր խավերի ներկայացուցիչներ: Նրա խոսքերով, քննարկումն անցկացվել է բաց եւ գործընթացում ներգրավվել էին արտասահմանյան փորձագետներ:

«Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել դոնոր կազմակերպություններին՝ Համաշխարհային բանկին, զարգացման Ասիական բանկին, վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկին, Արժույթի միջազգային հիմնադրամին, ինչպես նաեւ մեր բարեկամ երկրներին: Կարծում եմ, որ համընդհանուր քննարկման արդյունքում ստացել ենք հետաքրքիր փաստաթուղթ եւ, ամենակարեւորը, դրանում հստակորեն նույնականացված են իրականում առկա հիմնախնդիրները»,- հայտարարեց Խադուրին:

Նրա խոսքերով, ռազմավարության կիրարկումն արդեն ուժի մեջ է: Բոլոր նախարարություններին հանձնարարվել է մեկուկես ամսվա ընթացքում ներկայացնել իրականացվելիք միջոցառումների ցուցակը:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՍԿԻԶԲ

*Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի ստորագրմամբ, Եվրոպայի եւ Եվրամիության հարաբերությունները կթեւակոխեն զարգացման նոր փուլ:*



Այդ մասին հունիսի 5-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հետ հանդիպմանը հայտարարեց Եվրախորհրդի մարդու իրավունքների կոմիսար Թոմաս Համարբերգը:

«Նախագահի հետ կոնստրուկտիվ հանդիպում եղավ: Քննարկեցինք Եվրամիության եւ Վրաստանի միջեւ ասոցիացման համաձայնագրի իրականացումը: Ստորագրումից հետո իրավիճակի զարգացումը եւ այն, թե ինչ ձեւով է իրականացվելու Եվրամիության հետագա օգնությունը: Այսպիսով, համաձայնագրի ստորագրմամբ, համագործակցության նոր փուլ կմեկնարկի»,- հայտարարեց եվրակոմիսարը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ՝ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

### ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ԱԼՅԱՆՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

*Հունիսի 4-ին, ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում պաշտպանության նախարարների մակարդակով անցկացվեց Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի նիստը:*



28+1 ձեւաչափով անցկացված նիստը բացեց ալյանսի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսենը:

Նիստում ելույթ ունեցավ Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան:

Մինչ այդ, ալյանսի կենտրոնակայանում տեղի ունեցավ Իրակլի Ալասանիայի հանդիպումը Անդերս Ֆոգ Ռասմուսենի հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկրում ընթացող գործընթացները եւ պաշտոնական գերատեսչությունում իրականացվող բարեփոխումները: Առանձնակի ուշադրություն հատկացվեց միջազգային առաքելություններում Վրաստանի մաս-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵԱՀԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանում ԵԱՀԿ-ի առաքելության աշխատանքի վերականգնման անհրաժեշտությունը:

Համատեղ մամլո ասուլիսում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ողջունելով հյուրին, հայտարարեց. «Մենք ուրախ ենք, որ Վրաստան է այցելել Շվեյցարիայի նախագահը եւ ԵԱՀԿ գործող նախագահը: Այս այցը շատ կարեւոր է Վրաստանի ապագայի համար: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել իմ պաշտոնակցին՝ վրաց-ռուսական հարաբերություններում Շվեյցարիայի ունեցած դերի համար: Մենք քննարկեցինք Աբխազիայում առկա բարդությունները եւ խոսեցինք Վրաստանում ԵԱՀԿ-ի առաքելության նոր ձեւաչափերի մասին: Հուսով եմ, որ ԵԱՀԿ-ի առաքելությունը կվերսկսի աշխատանքը մեր երկրում»:

Իր հերթին, Բուրկհալտերն ընդգծեց Վրաստանի եւ Շվեյցարիայի սերտ համագործակցության եւ պաշտոնական Թբիլիսիի վերահսկողության տակ չգտնվող Աբխազիայի ու Ցխինվալի տարածաշրջանի տարածքներում կայուն իրադրության ապահովման կարեւորությունը:

ՎՐԱՍՏԱՆ-ԳԵՐՄԱՆԻԱ

# ԱՆԳԵԼԱ ՄԵՐԿԵԼ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԼԱՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ունեցավ Գերմանիայի կանցլերի հետ՝ սկզբում դեմ առ դեմ, իսկ այնուհետեւ ընդլայնված ձեւաչափով: Ապա տեղի ունեցավ Վրաստանի վարչապետի հանդիպումը Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամմերտի հետ:

Հանդիպումից հետո կայացած մամլո ասուլիսում Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, անդրադառնալով ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցին, նշեց, որ այն այժմ օրակարգում չի դրված: Մերկելի կարծիքով, այդ թեման չի լինի նաեւ ՆԱՏՕ-ի՝ Ուելսի Քարդիֆ քաղաքում սեպտեմբերին կայանալիք գագաթաժողովի օրակարգում:

Միաժամանակ, Գերմանիայի կառավարության ղեկավարը հավելեց, որ «Մենք տեսնում ենք այն առաջընթացը, որին ձգտում է Վրաստանը»: Նա նշեց նաեւ, որ նախկին Վրաստանը մասնակցում է ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող մի շարք գործողությունների ու միջոցառումների: Այդպիսով, Հյուսիսատլանտյան դաշինքի առաջիկա գագաթաժողովում պարզորոշ կարծանագրվի, որ «Վրաստանը լավ գործընկեր է»,- հավելեց Անգելա Մերկելը:

Պատասխանելով վրաց-ռուսական հարաբերությունների մասին հարցին, Իրակլի Ղարիբաշվիլին համատեղ մամլո ասուլիսում նշեց. «Երկու տարի առաջ իշխանության գալուց հետո, մենք ձեռնարկել ենք կառուցողական քայլեր, որոնք արդյունք են տվել եւ հավաստել, որ Վրաստանը կառուցողական, կանխատեսելի եւ կայուն կառավարություն ունի, որը ցանկանում է նորմալացնել հարաբերությունները հարեւանների, եւ, հատկապես, Ռուսաստանի հետ»:



Գերմանիայում, պաշտոնական այցի շրջանակներում, Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ նաեւ Քերբերի հիմնադրամի ներկայացուցիչների հետ, մասնակցեց Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի կողմից կազմակերպված խորհրդաժողովին:

Այցի շրջանակներում անցկացված վրացգերմանական գործարար համաժողովում Վրաստանի վարչապետը Գերմանիայի բիզնես հատվածի ներկայացուցիչներին ծանոթացրեց Վրաստանի գործարարության ոլորտի իրադրությանը: Գործարար համաժողովը կազմակերպվել էր ներդրումային գործակալության կողմից, եւ դրան ներկա էին գերմանական բիզնես հատվածի շուրջ 100 ներկայացուցիչներ:

Վրաց-գերմանական բարձր մակարդակի հանդիպման մասին տարածված հաղորդագրության մեջ նշվել է, որ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելն ընդունել է Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու՝ հանրապետություն այցելելու հրավերը:

«Այցը կկայանա մինչեւ 2015 թվականի գարունը: Գերմանիայի կանցլերի նախաձեռնությամբ Վրաստանում կանցկացվի վրաց-գերմանական ներկայացուցչական տնտեսական համաժողով, որը նպատակամղված կլինի երկու երկրների համագործակցության խորացմանն ու ընդլայնմանը»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԿԸՀ

# ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՆՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

***Հունիսի 3-ին Վրաստանի ԿԸՀ-ն ընդունեց որոշում, ըստ որի, սահմանվեցին այն չափորոշիչները, որոնց հիման վրա հնարավոր կլինի վերացնել սակրեբուլոյի ընտրություններում կուսակցական ցուցակների գրանցումը, եթե այդ ցուցակներում թեկնածուների թիվը նվազագույնից քիչ է:***

Ընտրական օրենսգրքի համաձայն, այն ընտրական մարզերում, որտեղ ընտրողների թիվը գերազանցում է 75 հազարը, համամասնական ցուցակում պետք է լինի առնվազն 15 թեկնածու, իսկ այն ընտրական մարզերում, որտեղ ընտրողների թիվը 75 հազարից քիչ է, թեկնածուների թիվը պետք է լինի առնվազն 10-ը: Եթե ընտրություններից երկու օր շուտ կուսակցական ցուցակում մնում է սահմանված նվազագույնից քիչ թեկնածու, ապա կուսակցական ցուցակի գրանցումը վերացվում է եւ, համապատասխանաբար, այդ քաղաքական սուբյեկտը չի կարողանա մասնակցել սակրեբուլոյի համամասնական ընտրություններին:

ԿԸՀ-ի նոր որոշման համաձայն, կուսակցական ընտրական ցուցակը կվերացվի միայն այն դեպքում, եթե գրանցված թեկնածուն վախճանվել է, կանգնեցվել է թեկնածուի Վրաստանի քաղաքացիությունը, գրանցումից հետո թեկնածուին տրվել է պասսիվ ընտրական իրավունք, մինչեւ ընտրությունները, առնվազն 10 օր շուտ, գրանցված թեկնածուն օրենքով սահմանված կարգով սուբյեկտի կողմից ետ է կանչվել: «Եթե կոնկրետ թեկնածուները անձնական դիմումի հիման վրա հանում են իրենց թեկնածությունը, ապա դա չի հանգեցնի ընտրություններից կուսակցական ցուցակի հանմանը»,- հայտարարեց հանձնաժողովի նախագահ Թամար Ժվանիան՝ մեկնաբանելով ԿԸՀ ընդունած որոշումը:

Նշենք, որ ընտրական օրենսգրքի վերոնշյալ փոփոխության առաջարկությամբ, հանդես է եկել կառավարող «Վրացական երազանք» կոալիցիան:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՕԳՈՍՏՈՍԻՆ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, Աբխազիայի խորհրդարանը մայիսի 29-ին անվստահություն էր հայտնել ինքնահռչակ հանրապետության վարչապետ Լեոնիդ Լակերբայային, իսկ նախագահ Ալեքսանդր Անկվաբին առաջարկել էր կամավոր վայր դնել լիազորությունները:***

Խորհրդարանը մայիսի 31-ին քվեարկել էր արտահերթ նախագահական ընտրություններն այս տարվա օգոստոսի 24-ին անցկացնելու օգտին եւ հանրապետության նախագահի պարտականությունների կատարումը դրել է խորհրդարանի նախագահ Վալերի Բգանբայի վրա:

Հունիսի 1-ին ժողովրդին հղած ուղերձում Անկվաբը հայտարարեց, որ հրաժարական է տալիս: Նա բացատրել է, որ այդ որոշումն ընդունվել է հասարակայնության ներկայացուցիչների, ընտրողների եւ զինակիցների հետ կայացած բազմաթիվ կոնսուլտացիաներից հետո:

Ինչ վերաբերում է օգոստոսի 24-ին անցկացվելիք նախագահական ընտրություններին, ապա դրանցում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն Աբխազիայում գործող քաղաքական վեց կուսակցությունները: Դրանք են՝ «Միասնական Աբխազիա» կուսակցությունը (նախագահ, նախկին փոխվարչապետ Դաուր Տարբան), «Ժողովրդական միասնության համաժողովը» (ղեկավար՝ Ռաուլ Խաջիմբան), Աբխազիայի տնտեսական զարգացման կուսակցությունը (ղեկավար՝ Բեսլան Բուտբան), Աբխազիայի կոմունիստական կուսակցությունը (ղեկավար՝ Լեւ Շամբան), Աբխազիայի ժողովրդական կուսակցությունը (ղեկավար՝ Յակուբ Լակոբան) եւ «Ամցախարա» հանրապետական քաղաքական կուսակցությունը, որը պաշտպանում է Աբխազիայի նախկին նախագահ Ալեքսանդր Անկվաբին (ղեկավար՝ Գարիկ Սամանբան):

Թեկնածուների գրանցումն սկսվելու է հունիսի 25-ին եւ ավարտվելու է հուլիսի 14-ին: Նախագահի ընտրությունների վերաբերյալ օրենքով հանրապետության ղեկավարի պաշտոնի թեկնածուն պետք է լինի 35-ից բարձր եւ 65-ից ցածր տարիքի ազգությամբ աբխազ: Բացի այդ, նա պետք է աբխազերեն լեզվի իմացության թեստ անցնի:

Առայժմ իշխանության ներկայացուցիչներից եւ ընդդիմադիրներից ոչ ոք չի հայտնել իր նախագահական հավակնությունների մասին: Ընդդիմության առաջնորդներ Սերգեյ Շամբան եւ Ռաուլ Խաջիմբան ավելի վաղ հայտնել են, որ չեն պատրաստվում իրենց թեկնածությունն առաջադրել ընտրություններում: Նախագահի պաշտոնակատար Վալերի Բգանբան նույնպես հրաժարվել է մասնակցել պետության ղեկավարի ընտրություններին: Տեսականորեն իր թեկնածությունը կարող է առաջադրել նաեւ նախկին նախագահ Ալեքսանդր Անկվաբը:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

*Ուկրաինայի գլխավոր դատախազի պաշտոնակատար Օլեգ Մախնիցկին հայտարարել է, որ ուկրաինական բանակի եւ Լուգանսկի ու Դոնեցկի մարզերի անկախության կողմնակիցների միջեւ տեղի ունեցած բախումների հետեւանքով զոհվել է 181 մարդ:*

*«Ընդհանուր առմամբ, Դոնեցկի ու Լուգանսկի մարզերում ահաբեկչական գործունեության արդյունքում զոհվել է 181 եւ վիրավորվել 293 մարդ, այդ թվում զոհվել է 59 զինծառայող»,- ասել է Մախնիցկին:*

*Նրա խոսքով՝ ահաբեկիչների ձեռքում են մնում տեղական իշխանության եւ իրավապահ մարմինների 35 միավոր: Այս պահին Ուկրաինայի իրավապահները հետաքննում են 675 քրեական գործ, որոնք կապված են զանգվածային անկարգություններ եւ ահաբեկչական գործողություններ կազմակերպելու, դիվերսիաներ կատարելու հետ:*

ՍԻՐԻԱ

## ԲԱՇԱՐ ԱԼ ԱՍԱԴԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

*Սիրիայում հունիսի 3-ին տեղի են ունեցել նախագահական ընտրություններ: Մրցակցությունը կայացել է նախագահի 3 թեկնածուներ՝ գործող նախագահ Բաշար Հաֆեզ ալ Ասադի, Հալեպից ընտրված պատգամավոր Մահել Աբդ ալ Հաֆեզի եւ գործարար Հասսան աբդ ալ Իլլահի ան Նուրիի միջեւ: Սիրիայում երկրի նախագահն ընտրվել է 7 տարի ժամկետով:*

*Ընտրություններում հաղթել է Բաշար Հաֆեզ ալ Ասադը՝ ստանալով ձայների մեծամասնությունը: Բաշար ալ Ասադի օգտին քվեարկել են 10 միլիոն 319 հազար 723 քաղաքացիներ, որը կազմում է ընդհանուր ձայների 88,7 տոկոսը: Ընտրություններին մասնակցել է ընտրողների ընդհանուր թվի 73,42 տոկոսը:*

*Եվրամիությունը Սիրիայում կայացած նախագահական ընտրությունների վերաբերյալ հունիսի 4-ին հայտարարել է, որ այն չի կարելի համարել ժողովրդավարական քվեարկություն:*

ԻՍՊԱՆԻԱ

## ԽՈՒԱՆ ԿԱՌԼՈՍԸ ՀՐԱԺԱՐՎԵՑ ԳԱՀԻՑ

*Իսպանիայի թագավոր Խուան Կառլոսը հրաժարվել է գահից՝ հօգուտ իր որդու՝ Աստուրիայի արքայազն Ֆելիպեի:*

*76-ամյա Խուան Կառլոսը իշխանություն է եկել 1975 թվականին՝ դիկտատոր Ֆրանսիսկո Ֆրանկոյի մահվանից երկու օր անց: Նրա կառավարումն Իսպանիայում նշանավորվել է բռնապետության ռեժիմից ժողովրդավարության անցումով:*

*Խուան Կառլոսը համարվում է աշխարհի ամենից ավելի ժողովրդականություն վայելող միապետներից մեկը: Սակայն վերջին ժամանակներս միապետը եւ թագավորական ընտանիքն սկսել էին կորցնել քաղաքացիների վստահությունը՝ հայտնվելով կոռուպցիոն սկանդալների կենտրոնում:*

ԵԳԻՊՏՈՍ

## ԱԲԴԵԼ ՖԱԹԹԱՀ ԱՍ ՍԻՍԻՆ՝ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

*Եգիպտոսի պաշտպանության նախկին նախարար, նախկին նախագահ Մուսիի պաշտոնաթողությունը պահանջող ընդդիմության ղեկավար Աբդել Ֆաթթահ աս Սիսին հաղթանակ է տարել երկրի նախագահական ընտրություններում: Սիսիի օգտին քվեարկել է քվեարկության մասնակցածների 96-91 տոկոսը: Նրա մոտակա մրցակցի՝ Համդին Սաբբահի օգտին քվեարկել է եգիպտացիների 3,09 տոկոսը:*

*ԿԸՀ-ում նաեւ տեղեկացրել են, որ ընտրություններին մասնակցել է ընտրելու իրավունք ունեցող եգիպտացիների 47 տոկոսը, մոտավոր տվյալներով՝ 25 մլն մարդ:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ՝ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



նակցության հարցին:

Կողմերը նաեւ վավերացրին Վրաստանի առաջընթացը: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը կրկին հավաստեց ալյանսի աջակցությունը՝ ուղղված Վրաստանի տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը:

ՆԱՏՕ-ի խորհրդարանական ասամբլեան Հյուսիսատլանտյան ալյանսի անդամ երկրների կառավարություններին եւ խորհրդարաններին կոչ է անում Վրաստանին հանձնել ՆԱՏՕ-ին անդամակցության ծրագիրը՝ ալյանսին մերձենալու եւ դրանով իսկ կատարել 2008 թվականի Բուխարեստի գագաթաժողովում ընդունած որոշումը, ըստ որի՝ անհրաժեշտ պայմանների կատարման դեպքում Վրաստանը կարող է դառնալ ՆԱՏՕ-ի անդամ: Այդ մասին ասված է ՆԱՏՕ-ի խորհրդարանական ասամբլեայի մայիսի 30-ին ընդունված հռչակագրում:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, մեկնաբանելով ՆԱՏՕ-ի խորհրդարանական ասամբլեայի հռչակագիրը, նշեց, որ, ի տարբերություն նախորդ կառավարության, իրենք նախնական սպասման իրավիճակ չեն ստեղծում: «Բնակչությանը այնպիսի խոստումներ չենք տալիս, որ հնարավոր է չկարողանանք կատարել: Սպասենք եւս մի քանի ամիս, որպեսզի իրավիճակը հստակեցվի»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:



## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ

*Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Ուկրաինայի նորընտիր նախագահ Պյոտր Պորոշենկոյի երդմնակալության արարողությանը մասնակցելու համար հունիսի 6-ին մեկնեց Կիեւ:*

*Նշենք, որ մայիսի 25-ին Ուկրաինայում անցկացված նախագահական ընտրություններից անմիջապես հետո, մայիսի 27-ին Գիորգի Մարգվելաշվիլին հեռախոսով շնորհավորեց Պորոշենկոյին ընտրություններում հաղթելու կապակցությամբ: Իր հերթին, Ուկրաինայի նախագահը շնորհակալություն էր հայտնել Վրաստանի իր պաշտոնակցին շնորհավորանքի համար եւ նրան հրավիրել երդմնակալության արարողությանը:*

*Ուկրաինայի ԱԳ նախարարության տեղեկատվությամբ՝ երդմնակալության արարողությանը մասնակցելու ցանկություն են հայտնել ԱՄՆ-ի փոխնախագահ Ջո Բայդենը, Լեհաստանի նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկին, Լիտվայի նախագահ Դալյա Գրիբաուսկայտեն, Շվեյցարիայի նախագահ Դիդիե Բուրկհալտերը, Եվրախորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպեյը, ԵԱՀԿ-ի գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերը եւ ուրիշներ:*

## ԸՆԴՈՒՆՎԵՑ ԲԱՆԱՁԵՎ ԱԲԽԱԶԻԱՅԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԵԹԻԱՅԻ ՀԱՐՑՈՎ

*Հունիսի 5-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 68-րդ նստաշրջանում ընդունել է Վրաստանի կողմից առաջադրված «Աբխազիայից եւ Ցխինվալի տարածաշրջանից ներքին տեղահանվածների եւ գաղթականների մասին» յոթերորդ բանաձեւը, քվեարկության ընթացքում փաստաթուղթը պաշտպանել է 69 երկիր, դեմ են քվեարկել 13-ը, ձեռնպահ են մնացել 79-ը: «Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը շնորհակալություն է հայտնում ՄԱԿ-ի այն բոլոր անդամ երկրներին, որոնք քվեարկել են բանաձեւի օգտին»,- հայտարարել է արտաքին քաղաքական գերատեսչությունը: Ըստ որում նշված է, որ բանաձեւի ամենամյա նախաձեռնումը նպատակ է հետապնդում միջազգային ուշադրությունը հրավիրել հարցի վրա եւ ընդլայնել կողմնակիցների քանակը:*

*Կատարման համար ոչ պարտադիր այդ բանաձեւը վերահաստատում է Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի փախստականների վերադարձման իրավունքը: Մեկնաբանելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած բանաձեւը, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին հայտարարեց, որ Ռուսաստանը պարտավոր է հաշվի առնել այդ բանաձեւը: «Նշանակալից է, որ աճում է Վրաստանի արդարացի պահանջը պաշտպանող երկրների թիվը: Ռուսաստանը պարտավոր է հաշվի առնել ՄԱԿ-ի ընդունած բանաձեւը»,- նշեց Զաքարեիշվիլին:*

## ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄ ԾԱԼԿԱՅՈՒՄ ԵՎ ԹԵԹՐԻԾՂԱՐՈՅՈՒՄ

*Ծալկայում եւ Թեթրիծղարոյում անասունների անկման հիմնական պատճառը ջերմաստիճանի կտրուկ նվազումն է: Այդ մասին տեղեկատվությունը տարածել է պարենի եւ անասնաբուժության ազգային գործակալությունը:*

*Վերոնշյալ մունիցիպալիտետներում գործակալության մասնագետները անցկացրին ստուգումներ եւ լաբորատորիայի միջոցով պարզեցին, որ տեղում վարակիչ հիվանդություններ չեն գրանցվել: Անասունների անկման հիմնական պատճառը եղանակային պայմանների կտրուկ վատացումն է՝ ջերմաստիճանի կտրուկ նվազումը, հորդառատ անձրեւներն ու կարկուտը: Թեպետ հնարավոր վարակիչ հիվանդությունների կանխման նպատակով, Ծալկայում եւ Թեթրիծղարոյում անցկացվեցին պատվաստումներ:*

ԴՊՐՈՑ

# ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԴԱՍԵՐԸ ՎԵՐՍԿՍՎԵՑԻՆ

***Մինինգիտի մանրէի տարածմամբ պայմանավորված երկշաբաթյա ընդմիջումը հանրային դպրոցներում ավարտվեց:***

Հունիսի 2-ից հանրային դպրոցների տարրական դասարաններում եւ մանկապարտեզներում դասընթացները վերսկսվեցին: «Վարակի տարածման դինամիկան նվազել է: Շուրջ 300 հիվանդներ արդեն դուրս են գրվել հիվանդանոցից, 100-ի բուժումը շարունակվում է»,- հայտարարեց Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն: Նախարարի հավաստմամբ, հիվանդությունը եղել է թեթեւ եւ միջին ծանրության: Հիշեցնենք, որ մինինգիտի մանրէով հիվանդության առաջին դեպքը վավերացվել է ընթացիկ տարվա ապրիլի 24-ին: Հիվանդությունը տարածվել է ոչ միայն մայրաքաղաքում, այլեւ՝ երկրի տարածաշրջաններում: Այդ պատճառով առողջապահության նախարարությունը մայիսի երկրորդ կեսին հանրային դպրոցներում տարրական դասարաններում եւ մանկապարտեզներում դադարեցրել է դասընթացները:

Հիվանդությունների եւ հասարակական առողջապահության վերահսկողության ազգային կենտրոնի տվյալներով, մինինգիտի մանրէով գրանցվել է հիվանդության 538 դեպք, որից 291-ը՝ մայրաքաղաքում:

Մինինգիտի մանրէի տարածման կապակցությամբ, Վրաստանի կրթության նախարարությունը երկրի հանրային դպրոցներում հաստատել է խիստ վերահսկողություն:

Ինչպես հայտարարեց կրթության նախարար Թամար Սանիկիձեն, դպրոցներ են առաքվել՝ ինչպես ռեսուրսկենտրոնների, այնպես էլ նախարարության մոնիտորինգի ծառայության աշխատակիցներ, որոնք տեղերում վերահսկելու են իրավիճակը: Այդ մարդիկ վերահսկելու են ուսումնական գործընթացը եւ հիգիենայի պայմանները: Ներկա դրությամբ, տեղերից ստացվող տեղեկատվությունը հուսադրող է»,- հայտարարեց Սանիկիձեն:



# ԿՎԵՐԱՆՈՐՈԳՎԵՆ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ԿԿԱՌՈՒՑՎԵՆ ՆՈՐԵՐԸ

***Նոր ուսումնական տարվա համար կվերանորոգվեն հարյուրավոր դպրոցներ եւ կկառուցվեն նորերը:***

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, գերատեսչությունն անընդմեջ շարունակում է հանրակրթական հաստատությունների վերանորոգման-շինարարական աշխատանքները: Նրա խոսքերով, բացի նրանից, որ կկառուցվեն մի քանի նոր դպրոցներ նոր ուսումնական տարվա համար, կվերանորոգվեն հարյուրավոր դպրոցներ, այդ թվում նաեւ պրոֆեսիոնալ ուսումնարանները:

«2014 թվականին կվերանորոգվեն Թբիլիսիում 43 հանրային դպրոցներ: Բացի այդ, մայրաքաղաքում կսկսվի երեք նոր դպրոցների շինարարությունը եւ երեք ուսումնարանների վերանորոգումը: Սամցխե-Ջավախեթիում կվերանորոգվեն 28 դպրոցներ եւ մեկ ուսումնարան, Քվեմո Քարթլիում՝ 34 հանրային դպրոց»,- հայտարարեց նախարարը:

Նրա խոսքերով, 2014 թվականին կսկսվի մի քանի նոր դպրոցների շինարարությունը, միաժամանակ կանցկացվեն վերանորոգման աշխատանքներ: «Մասնավորապես, վերանորոգման աշխատանքներ կանցկացվեն Սամցխե-Ջավախեթիի, Ադիգենի մունիցիպալիտետի Արալ գյուղի դպրոցում, ինչպես նաեւ՝ Թբիլիսիի թիվ 103 եւ 100 հանրային դպրոցներում: Վերոնշյալ նախագծի արժեքը կազմում է 36718990,38 լարի»,- հայտարարեց Սանիկիձեն՝ հավելելով, որ միաժամանակ երկրում սկսվել է 9 նոր դպրոցի շինարարությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏ՝ ԵՐՐՈՐԴ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

***Երրորդ երեխայի ծնվելու դեպքում, պետությունն ընտանիքին կհանձնի 150-200 լարիի նպաստ: Վրաստանի առողջապահության նախարարության այս նոր ծրագիրն ուժի մեջ է մտել հունիսի 1-ից:***



Բացի այդ, ինչպես հայտարարեց առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն, հղի կանայք ինն ամսվա ընթացքում կապահովվեն անհրաժեշտ դեղորայքով: Երրորդ եւ հաջորդ երեխայի ծնվելու դեպքում, պետության կողմից կնշանակվի ֆինանսական օգնություն մինչեւ երեխայի 2 տարեկան լրանալը: Դա սովորական տարածաշրջաններում 150 լարի է կազմում, իսկ բարձրալեռ գոտում՝ 200:

Միաժամանակ մեկնարկում է եւս մի նախագիծ. «Հղիության ժամանակ բոլոր հղի կանայք կապահովվեն իրենց համար անհրաժեշտ բուժական հատուկ միջոցներով: Դրանք դեղորայքներ են, որոնք պարունակում են երկաթ եւ ֆոլյումային թթու»,- հայտարարեց Սերգեյենկոն:

Նախարարն անդրադարձավ նաեւ, այսպես կոչված, թույլ թմրանյութերի օգտագործման թեմային: Նրա խոսքերով, մարիխուանայի սպառողների դեմ անհամապատասխան խիստ միջոցներ չեն կիրարկվի: Նախարարի խոսքերով, մոտ ժամանակներս գերատեսչությունը հասարակայնությանը կներկայացնի թմրաքաղաքականության ռազմավարությունը:

ՌԱԶՄԱԿԱՆ

# ԽԱՂԱՂԱՊԱՀ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ ԱՖՂԱՆՍՏԱՆ ԵՎ ԿԱՀ

***Վրաստանի զորամիավորումները շարունակում են խաղաղապահ առաքելությունը Աֆղանստանում եւ միաժամանակ վրաց առաջին զորամիավորումը նույն առաքելությամբ ուղեւորվեց Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն (ԿԱՀ):***

ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Չաք Հեյգելը շնորհակալություն է հայտնել Վրաստանին այն խոստման համար, որ 2014 թվականից հետո վրացական մի գումարտակ կմասնակցի Աֆղանստանում իրականացվող առաքելությանը: Այդ մասին Հեյգելը հայտարարել է Բրյուսելում ՆԱՏՕ-ի երկրների պաշտպանության նախարարների երկօրյա հանդիպման արդյունքներին նվիրված մամուլի ասուլիսում:

Հունիսի 4-ին այստեղ կայացել է ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովի նիստը՝ պաշտպանության նախարարների մակարդակով, որին հաջորդել է Աֆղանստանի անվտանգության աջակցման միջազգային ուժերի (ISAF) առաքելության մասնակից երկրների պաշտպանության նախարարների հանդիպումը:

Ներկայումս Աֆղանստանում ծառայում է վրացի 805 զինվորական:

Վրաստանի պաշտպանության նախարարության վաշտը հունիսի 6-ին առաջին անգամ խաղաղարար առաքելությամբ ուղեւորվեց Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն. մեկնման արարողությունը տեղի ունեցավ Թբիլիսիի մերձակա Վազիանի ռազմահանգրվանի օդանավակայանում: Արարողությանը մասնակցեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, պաշտոնական այլ անձինք:

ՀՈՒՆԻՍԻ 15-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՈՒՄ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԸՆՏՐԵԼՈՒ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մինչեւ ընտրությունների օրը վերջին երկու տարիներին անընդմեջ բնակվել են Վրաստանում: Մունիցիպալային սակրեբուլոյի անդամ կարող են ընտրվել 21 եւ ավելի բարձր տարիք ունեցող Վրաստանի քաղաքացիները, ովքեր հինգ տարի մշտապես ապրել են Վրաստանում, իսկ մինչեւ ընտրությունների օրը երկու տարի անընդմեջ ապրել են երկրում:

Հունիսի 15-ին Թբիլիսիի բնակիչները քաղաքապետից բացի ընտրելու են սակրեբուլոյի 50 անդամների, որից 25-ն ընտրվելու են մեծամասնական, իսկ մյուս 25-ը՝ համամասնական ցուցակով: Ինքնակառավարման մյուս քաղաքներում, եթե բնակչության թիվը գերազանցում է 45 հազարին, սակրեբուլոյում ընտրվելու են 15 անդամներ, որից 10-ն ընտրվելու է մեծամասնական ընտրակարգով: 75 հազարից նվազ բնակչություն ունեցող քաղաքի սակրեբուլոյում ընտրվելու են 10 անդամներ, որից 5-ը մեծամասնական համակարգով:

Ինչ վերաբերում է քաղաքապետերի, մունիցիպալային վարչության նախագահի, սակրեբուլոյի անդամների թեկնածությունների առաջադրմանը, ապա դրա իրավունքը վերապահվում է այն կուսակցությունների ընտրական դաշինքներին, ընտրողների հինգ հոգուց բաղկացած նախաձեռնողական խմբերին, ովքեր նախօրոք գրանցում են անցել համապատասխան ընտրական համաժողովում: Ընդ որում, եթե մեծամասնական ընտրակարգով յուրաքանչյուրը կարող է առաջադրվել որպես թեկնածու, ապա համամասնական ընտրակարգում պարտադիր մասնակցում են միայն համապատասխան հանձնաժողովի կողմից գրանցված կուսակցությունները, ընտրադաշինքները:

# ՏՀԱՃ ՄԻՋԱԴԵՊ ՄԱՌՆԵՈՒԼԻՈՒՄ

## ՆԳ ՆԱԽԱՐԱՐ. «ՄԻՋԱԴԵՊԻ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ԿՊԱՏԺՎԵՆ»

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի խոսնակ Էկա Ազարաշվիլին, հանձնաժողովն ընտրություններից հանել է «Ազգային շարժումից» Մառնեուլիի վարչության նախագահի պաշտոնի թեկնածու Աիմամեդ Իմամկուլիեւին: Որպես պատճառ, ԿԸՀ-ն հայտարարել է, որ Աիմամեդ Իմամկուլիեւն երկար ժամանակ չի ապրել Վրաստանում:

Հունիսի 5-ին «Միասնական ազգային շարժման» մի խումբ լիդերներ՝ Գիգի Ուգուլավան, Նուգզար Ծիկլաուրին, Իրմա Նադիրաշվիլին եւ ուրիշներ, Մառնեուլիի մարզային ընտրական հանձնաժողովում փորձեցին պարզել իրենց թեկնածուի ընտրություններից հանելու պատճառները, ընդսմին, բանավոր վիրավորանք հասցնելով մարզային հանձնաժողովի նախագահին: Միաժամանակ մարզային հանձնաժողովի շենքի մոտ «Ազգային շարժման» կողմնակիցներն անցկացրին բողոքի ցույց:

Տեղի ունեցածի կապակցությամբ, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ անթույլատրելի է համարում ցանկացած քաղաքական ուժի կամ ընտրական սուբյեկտի կողմից ընտրական վարչակազմի գործունեության միջամտությունը: Միջադեպի կապակցությամբ, հանդես եկավ նաեւ «Վրացական երազանք» ընտրական բլոկը, որը համապատասխան մարմիններին կոչ է անում անհապաղ արձագանքել տեղի ունեցածի կապակցությամբ:

Հունիսի 6-ին Մառնեուլիում տեղի ունեցած միջադեպին արձագանքեց նաեւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Նա նախկին կառավարող կուսակցությանը մեղադրեց Մառնեուլիի ընտրական հանձնաժողովի վրա ճնշում գործադրելու մեջ: Նա Վրաստանի ՆԳ նախարարին ու դատախազին խնդրեց անձնական վերահսկողության տակ առնել միջադեպի հետաքննության գործը:

Իր հերթին, Վրաստանի ՆԳ նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն հայտարարեց, որ հաշվի առնելով նախընտրական մոդատորիումի հանգամանքը, Մառնեուլիի միջադեպի մասնակիցների գործի հետաքննությունը կիրականացվի ընտրություններից հետո:

Նշենք, որ հունիսի 6-ին, միջադեպի հաջորդ օրը, դրա մասնակից Գիգի Ուգուլավան հրապարակայնորեն ներողություն խնդրեց տեղի ունեցածի համար:

# ՀԱՆԳԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ

***Ինչպես տեղեկացրել է քաղաքական կուսակցությունների ֆինանսական մոնիտորինգի ծառայությունը, ընտրություններին մասնակից ընտրական սուբյեկտները, որպես հանգանակություն, 2014 թվականի մայիսին ստացել են 1938524 լարի:***

Հանգանակությունների մեծ մասը հասել է կառավարող «Վրացական երազանք» կոալիցիային: Նրա օգտին հանգանակությունը կազմել է 1280141 լարի:

Մոնիտորինգի ծառայության կողմից տարածած տեղեկատվության համաձայն, ընդդիմադիր «Միասնական ազգային շարժումը» ստացել է 271149 լարիի, «Քրիստոնեա-ժողովրդավարական շարժումը» 279468, «Վրաստանի ուղի» կուսակցությունը՝ 50635, «Լեյբորիստական կուսակցությունը»՝ 16867, «Վրացական կուսակցությունը»՝ 16200, «Արտախորհրդարանական ընդդիմություն» միավորումը՝ 13258, «Ժողովրդական կուսակցությունը»՝ 5400, «Կանաչների» կուսակցությունը՝ 4165, «Մերաբ Կոստավայի ընկերությունը»՝ 1190 եւ նախաձեռնողական խմբերը՝ 34342 լարի հանգանակություն:

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կությունները համընկել են»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետի խոսքերով, ինքը «հավատում է, որ այդպես էլ կլինի, որովհետեւ «Վրացական երազանքը» այլընտրանքային քաղաքական ուժ է: Մենք հինգ գլուխ բարձր ենք կանգնած ցանկացած քաղաքական ուժից, առավել եւս «Ազգային շարժումից»:

## ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՐԱՄԱՅԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԿԱՐԻՔ ՉԿԱ

Մամլո ասուլիսում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին կտրականապես հերքեց իր եւ նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու միջեւ իբր գոյություն ունեցող տարաձայնությունների վերաբերյալ լուրերը եւ լրագրողներին կոչ արեց դրամատիկ գույներով չներկայացնել այդ թեման:



«Ոչ մի տարաձայնություն իմ եւ Մարգվելաշվիլու միջեւ գոյություն չունի... Մենք սովորական հարաբերություններ ունենք, ինչպիսին պետք է ունենան վարչապետը եւ նախագահը»,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նրա խոսքով՝ բոլորը պետք է վարժվեն այն բանին, որ «Սահմանադրությունը փոխվել է, վարչապետն իր գործառույթներն ունի, նախագահն՝ իրենը, եւ «արտասովոր ոչինչ չկա այն բանում, որ «նախագահը կամ վարչապետը հաճախ միասին չեն երեւում»:

Իսկ ինչ վերաբերում է առանձին հարցերում դիրքորոշումների տարբերությանը, ապա, ինչպես նշեց Իրակլի Ղարիբաշվիլին. «Մեր արձանագրած տարբեր դիրքորոշումները նշանակում են, որ երկրում առկա է իրական ժողովրդավարություն, ուստի ոչ մի ողբերգություն չկա, դեռ ավելին, նորմալ է, երբ նախագահը եւ վարչապետը միանման չեն մտածում, չնայած նույն քաղաքական թիմի մեջ են»:

## ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Հանրագումարելով վերջին 18 ամիսների ընթացքում գործադիր մարմնի աշխատանքը, Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ «Վրացական երազանքի» կառավարությունը կատարում է իր խոստումները: Մասնավորապես, նվազեցվել են էլեկտրաէներգիայի եւ բնական գազի սակագները, ավելացվել են բոլոր ուղղություններով տրվող կենսաթոշակները, փախստականների նպաստները, կրկնապատկվել է սոցիալական օգնությունը, ավելացվել է մանկավարժների աշխատավարձը, նաեւ մեծացվել են դպրոցների վերանորոգման համար հատկացվող միջոցները:

Վարչապետն առանձնակի ընդգծեց համընդհանուր առողջապահության ծրագիրը: Նրա խոսքերով, այդ ուղղությամբ ֆինանսավորումն ավելացել է 300 միլիոն լարիով: «Մենք ապացուցեցինք, որ բյուջեն կողմնորոշված է քաղաքացու կողմը: Այն, ինչ արվեց 18 ամիսների ընթացքում, աննախընթաց էր»,- հայտարարեց Ղարիբաշվիլին:

## ԱԳՐՈՎԱՐԿԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼ Է 74 ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Խոսելով իր գլխավորած կառավարության կոնկրետ ձեռքբերումների մասին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ, վերջին տվյալներով, արտոնյալ ագրովարկի ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել է 74 նոր ձեռնարկություն, որտեղ աշխատում է ավելի քան 700 մարդ: «Անընդհատ հոլովվում է այն թեման, թե որտեղ են մեր խոստացած 100 գործարանները: Մենք բնակչությանը խոստացել ենք, որ մինչեւ 2016 թվականի վերջը կբացվի առնվազն 100 նոր ձեռնարկություն: Այս տարի մենք արդեն բացել ենք 70-ը: Միաժամանակ ընդլայնվում եւ նորացվում է եւս 400 ձեռնարկություն»,- նշեց Ղարիբաշվիլին:

## ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԻՋԱՄՏԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին ընդգծեց, որ Վրաստանի Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի ստորագրման գործընթացին Ռուսաստանը միջամտելու մտադրություն չունի: «Ռուսաստանն այդ մասին հրապարակայնորեն հայտարարեց եւ կարծում եմ, որ դա այդպես էլ կլինի»,- ասաց նա:

Վարչապետն Աբխազիայում տեղի ունեցող իրադարձությունները, նախագահի փոփոխման փորձը եւս չի առնչում Ռուսաստանի միջամտության հետ. «Դա ներքին տեղափոխություններ են, ինչը չեմ ցանկանում առանց մանրամասն վերլուծության մեկնաբանել»,- ասաց նա:

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՈՒՂՂԱԿԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի կառավարությունը պատրաստակամություն է հայտնել անմիջականորեն հանդիպել Ռուսաստանի ղեկավարության հետ: Այդ մասին ասաց Իրակլի Ղարիբաշվիլին՝ հավելելով, որ նման հանդիպման ժամկետների, վայրի եւ ձեւաչափի մասին խոսելը վաղաժամ է, թեպետ պատրաստակամությունն ակնհայտ է:

Ինչպես նշեց վարչապետը, Վրաստանը վերածվել է երկրի, որը կոնստրուկտիվ հարաբերություններ է հաստատում Ռուսաստանի հետ եւ մյուս կողմից ձեւակերպում է ասոցիացման հարաբերություններ Եվրամիության հետ:

Ղարիբաշվիլին ընդգծեց, որ դրական տեղաշարժեր են նկատվում արդեն վրաց-ռուսական հարաբերություններում. «Մենք արդեն առեւտուր ենք անում Ռուսաստանի հետ, եւ այդ գործընթացն ընդլայնվում է: Մենք հնարավոր ամեն ինչ անում ենք հյուսիսային հարեւանների հետ կարգավորման համար»,- հայտարարեց վարչապետը:

## ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑԻՆ ԾՐԱԳՐՎԱԾ ՉԱՓԸ

Իրակլի Ղարիբաշվիլին, խոսելով տնտեսական իրավիճակի մասին, նշեց, որ 2014 թվականի առաջին եռամսյակում, հարկային եկամուտները գերազանցեցին ծրագրված չափը: «Վերջերս հաճախ են շահարկում բյուջեի թեման: Այսօրվա դրությամբ, առաջին եռամսյակի հարկային եկամուտները գերազանցել են սահմանված չափը: Միաժամանակ, 2012 թվականի համեմատությամբ, անցյալ տարի արտահանումն ավելացել էր 21 տոկոսով, իսկ ընթացիկ տարվա չորս ամիսների ընթացքում, Վրաստանն արտահանել է 19 տոկոսով ավելի արտադրանք, քան ողջ 2013 թվականին»,- նշեց վարչապետը:

## ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ԿՈՆԿՐԵՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Իրակլի Ղարիբաշվիլին մամլո ասուլիսում հայտարարեց, որ Վրաստանը վարում է բավականին արդյունավետ արտաքին քաղաքականություն: «Ցանկանում եմ նշել, որ անցյալ տարի մենք իրականացրինք շատ արդյունավետ բանակցություններ, կայացավ Եվրամիության հետ ասոցիացման հետ համաձայնագրի նախաստորագրումը, ինչը վերջնականապես ավարտին կհասցվի հունիսի 27-ին: Աննախընթաց թվով բարձր մակարդակի այցելություններ են կատարվել: Կարճ ժամանակահատվածում մենք հանդիպումներ ենք ունեցել գործնականում համաշխարհային բոլոր լիդերների հետ»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

## ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԼԻՆԵՆ ԱՎԵԼԻ ԼԱՎ, ՔԱՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆՆ ԷՐ

Լրագրողների հետ հանդիպմանը Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ իրենք հավակնում են տեղական ինքնակառավարման ընտրություններն անցկացնել ավելի լավ, քան նախագահականն էր: Նրա հավաստմամբ, բարելավվել է նախընտրական միջավայրը: «Մենք բացարձակապես բարելավել ենք ընտրական միջավայրը»,- ընդգծեց վարչապետը:

Վարչապետն անդրադարձավ նաեւ տեղական ինքնակառավարման բարեփոխումների հարցին: Նրա խոսքերով, այդ ոլորտի համար ստեղծվել է «հեղափոխական» օրենսգիրք: «Այսօր հաճախ եմ լսում խոսակցություններ, թե իբր կառավարությունը ոչինչ չի արել եւ ամեն ինչ թողել է այնպես, ինչ մշակել էր «Ազգային շարժումը»: Ցանկանում եմ հիշեցնել, որ Վրաստանի նորագույն պատմության մեջ առաջին անգամ կընտրվեն 12 քաղաքների քաղաքապետերը եւ շուրջ 60 վարչության նախագահները: Դա նշանակալի առաջընթաց է, ինչը Եվրամիության շատ երկրներում դեռ չի զգացվում»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին: